ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 289- Ա 06 ապրիլի 2016 թ.

«ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2006 թվականի փետրվարի 1-ի N 15-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության մարզական և մշակութային գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի ամցկացման ընթացակարգի 7-րդ կետը՝

որոշում եմ՝

1. Հաստատել 2016 թվականի ապրիլի 7-ին, ժամը 11^{00}-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղարքունիքի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ Խլղաթյան Սևակ (մարզպետարանի աշխատակազմի ղեկավար), Աղեկյան Ալբերտ (մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ), Բաղալյան Գարիկ (մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ), Սարգսյան Նելսոն (մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ) և Խաչատրյան Հայկ (մարզպետի խորհրդական):

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Սևակ Խլղաթյանին, քարտուղար՝ Նելսոն Սարգսյանին:

3. Հանձնաժողովի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ